

,ՀԱՅԿԱԿԱՆ ,ՏԻ.ԷՆ.ԷՅԵԸ ԿԸ ԹՈՒԻ ԾԱՏ ՀԻՆ ԸԼԼԱԼԷ, ,ԱԶԴԱԿԵԻՆ ԸՍԱԻ ՓԻԹԸԸ
ՀՐԵՇՏԱԿԵԱՆ

Ուրբաթ, 8 հոկտեմբերին, Փիթըր Հրեշտակեան այցելեց «Ազդակ» օրաթերթի
խմբագրատուն: Օգտուելով այդ առիթէն՝ անոր հետ ունեցանք հետեւեալ
հարցազրոյցը:

«ԱԶԴԱԿ».- Ներկայիս դուք կը մասնակցիք հայկական «Տի. Էն. Էյ.»ի
ուսումնասիրութեան մը: Ինչպէ՞ս մասնակից դարձաք այդ ծրագիրին:

ՓԻԹԸԸ ՀՐԵՇՏԱԿԵԱՆ.- Ես անձնապէս մասնակից դարձայ, որովհետեւ
պատմութիւնը ընդհանուր առմամբ եւ հայ ժողովուրդին պատմութիւնը
մասնաւորաբար միշտ հետաքրքրած են զիս, եւ ես միշտ հարց տուած եմ, թէ արդեօք
ո՞ր են հայերուն ծինային արմատները (օրինակի համար՝ որքա՞ն հայեր
ուրարտացիներէ սերած են): Սակայն անկարելի էր: Մեր ամբողջ ունեցածը
պատմական գրութիւններ են: Առաւել, պատմութիւնը յաճախ գրուած է ոչ հայերու
կողմէ, ինչպէս Հերոդոտոսը. ուստի, ո՞ր մէկն է ճիշդը եւ ո՞ր մէկը՝ սխալը: Վեց կամ
եօթը տարի առաջ տեսայ, թէ կարելի է նախնիներու վերլուծում կատարել «Տի. Էն.
Էյ.»ի ճամբով, եւ այդպէս սկսայ հետաքրքրուիլ նիւթով եւ ուսումնասիրեցի հարցը,
հակառակ անոր որ ես բնագէտ կամ ծինագէտ չեմ: Շուտով տեսայ, թէ հարցը շատ
հոյակապ էր, բայց շատ նոր գիտութիւն մըն էր, շատ քիչեր քննուած էին եւ
արդիւնքները շատ նախնական էին: Ուստի ես սպասեցի մինչեւ 2007-ը եւ այն
ատեն միայն քննուեցայ: Արդիւնքները գոհացուցիչ չէին, այն իմաստով, որ
քննութիւնը կատարող ընկերութիւնները Միացեալ Նահանգներու մէջ կը գտնուին
եւ չեն կրնար զանազանել հայ մը պասքէ մը կամ ճափոնցիէ մը: Հիմնականին մէջ
անոնք միայն թիւեր կու տան եւ չեն կրնար օգնել քեզի՝ վերլուծումի կամ
մեկնաբանութեան առումով: Ես ուրախ չէի այս իրողութեամբ եւ որոշեցի աւելի
խորանալ՝ հասկնալու համար, թէ ի՞նչ կը նշանակէին այդ թիւերը: Շատ ժամանակ
առաւ, գրեթէ մէկ տարի, մինչեւ որ ես հանգիստ զգացի արդիւնքներովս: Ապա
որոշեցի քննել հօրս եւ մօրս կողմէն զարմիկներուս «Տի. Էն. Էյ.»ները, ինչպէս նաեւ
գտայ կարգ մը հայ բարեկամներ, որոնք այդ քննութիւնը ըրած էին, սակայն իրենք
ալ յուսախաբ եղած էին արդիւնքներուն մեկնաբանութենէն: Վերջապէս
բարեկամներէս մէկը, որ մելիքներուն, Մամիկոնեաններուն եւ այլոց ծիները
կուսումնասիրէր, օգնութիւն խնդրեց ինձմէ՝ արդիւնքները վերլուծելու համար:
Հետեւաբար հիմնականին մէջ այս ձեւով անձնական հետաքրքրութիւն մը
վերածուեցաւ ընդհանուր հետաքրքրութեան մը եւ յետոյ զարգացաւ ըլլալու
Հայկական «Տի. Էն. Էյ.»ի ծրագիրը, որ ծնունդ առաւ 2009 սեպտեմբերին:

«ԱԶԴԱԿ».- Տարդ ո՞ր հասած էք:

ՓԻԹԸԸ ՀՐԵՇՏԱԿԵԱՆ.- Հայկական «Տի. Էն. Էյ.»ի ծրագիրը հանրային ծրագիր մըն է,
որ կը կատարուի կամաւոր աշխատանքով: Մենք չենք վճարուիլ մեր
աշխատանքին համար: Քննութիւնը ընող ընկերութիւնը («Ֆամիլի թրի Տի. Էն. Էյ.»)

մեզի տեղ յատկացուցած է իր կայքէջին վրայ, ինչպես նաև տրամադրած է արդիւնքները կառավարելու միջոցները: Նախ եւ առաջ փորձեցինք մեր ծրագիրին մէջ ներառել բոլոր այն հայերը, որոնք քննուած էին, եւ յանկարծ ունեցանք քառասունէն յիսուն անդամ: Ապա սկսանք մեր ծրագիրին մասին խօսիլ ուրիշ հայերու: Ներկայիս մենք ունինք հայրական կողմի քննութիւններու երկու հարիւր քառասունհինգ ամբողջացած արդիւնքներ, իսկ մայրական կողմի՝ հարիւր հինգ քննութեան արդիւնքներ: Երեսունէն քառասուն «Տի. Էն. Էյ.»ի քննութիւններ տակաւին կը վերլուծուին: Մենք ուրախ ենք, որ զերոյէն սկսելէ ետք մէկ տարուան մէջ հասած ենք երեք հարիւր մասնակիցի: Այս արագութեան հիմամբ, մեր թիրախն է մինչեւ 2011-ի աւարտը ունենալ հազար մասնակից: Մենք կը կարծենք, որ կրնանք իրագործել այդ նպատակը, որովհետեւ հայեր հետզհետէ կը խանդավառուին իրենց սեփական «Տի. Էն. Էյ.»ի քննութեամբ, ինչպէս նաև՝ Հայկական «Տի. Էն. Էյ.»ի ուսումնասիրութեամբ ընդհանրապէս:

«ԱԶԴԱԿ».- Ո՞ր երկիրներէն կը հաւաքուին «Տի. Էն. Էյ.»ի օրինակները:

ՓԻԹԸՐ ՀՐԵՇՏԱԿԵԱՆ.- «Տի. Էն. Էյ.»ի օրինակները կու գան որեւէ երկիր բնակող հայերէ եւ կը դրկուին Թեքսաս նահանգի Հիուսթըն քաղաքի «Ֆամիլի Թրի Տի. Էն. Էյ.» տարրալուծարան: Մեր ծրագիրին մասնակցող հայերը կու գան Հայաստանէն, Լիբանանէն, Սուրիայէն, Երուսաղէմէն, Ռուսիայէն, Վրաստանէն, Երոպայէն, Միացեալ Նահանգներէն, Քանատայէն եւ թէ՛ Կեղրոնական եւ թէ՛ Հարաւային Ամերիկաներէն: Մենք նաև ունինք հայեր Թուրքիայէն, որոնք տակաւին Պոլսոյ մէջ կը բնակին, ինչպէս նաև՝ քանի մը քրիստոնէայ համշէնահայեր եւ իսլամացած համշէնահայեր: Մենք ունինք մեծ թիւով հայեր Արցախէն, ներառեալ՝ շատեր մեյիքական ընտանիքներէն: Վերջապէս, մենք Իրանէն ունինք քսան հայեր, որոնց մեծամասնութիւնը Նոր Զուղայէն են:

«ԱԶԴԱԿ».- Որեւէ նախնական արդիւնքներու հասած էք ցարդ:

ՓԻԹԸՐ ՀՐԵՇՏԱԿԵԱՆ.- Այո: Հայկական «Տի. Էն. Էյ.»ը կը թուի շատ հին ըլլալ: Արդի ժամանակներու մարդիկը, որոնք ներկայիս կը բնակին Երոպայի եւ արեւմտեան Ասիոյ մէջ ծագում, առած են մեր շրջանէն: Առայժմ հայկական «Տի. Էն. Էյ.»ը իւրայատուկ է, որովհետեւ մեր շրջանի միւս ժողովուրդներէն ոչ մէկը նոյնքան ամբողջական կերպով կ'ուսումնասիրուի, ինչպէս մենք: Կուգեմ շեշտել, որ այդ իւրայատկութիւնը ժամանակաւոր է, եւ հայկական «Տի. Էն. Էյ.»ին վերաբերեալ որեւէ իւրայատուկ բան չկայ: Մեր «Տի. Էն. Էյ.»ը նշանակալից է նաև ոչ հայերու համար, որովհետեւ յաճախ իրենց նախահայրերուն տարբերակը կը ներկայացնէ: Ես հինգ նախնական եզրակացութիւններու յանգած եմ: Կը խնդրեմ, որ նկատի առնէք, թէ անոնք կը ներկայացնեն իմ անձնական տեսակէտս եւ ենթակայ են փոփոխութեան եւ վերանայման:

Նախ եւ առաջ հայկական «Տի. Էն. Էյ.»ը ոչ միայն շատ հին է, այլև՝ շատ այլազան: Հայ այր մարդոց ծինային գիծերը կը պատկանին տասներեք շատ հին խումբերու եւ անոնց մէջ կան յիսուն տարբեր հին ճիւղաւորումներ: Կիներու ծինային գիծերն ալ

կը պատկանին տասներեք հին խումբերու եւ առնուազն երեսունհինգ անջատ ճիւղաւորումներու: Այդ խումբերէն եւ ճիւղաւորումներէն իւրաքանչիւրը գոյութիւն ունեցած է չորս կամ հինգ հազար տարի առաջ, նախքան որ հայ ազգ ըլլանք եւ սկսինք խօսիլ մեր լեզուն: Ասիկա կը նշանակէ, թէ հայերը չեն սերած մէկ ժողովուրդէ կամ առասպելական Հայկէն: Անոնք սերած են շատ մը տարբեր եւ հին ժողովուրդներէ: Երկրորդ, մենք կրնանք մենք մեզի հարց տալ, թէ՛ այդ ժողովուրդները այդ շրջանին բնի՞կ են, թէ՞ կու գան ուրիշ տեղէ: Երբ մենք մանրամասնօրէն ուսումնասիրենք այդ մէկը, կը տեսնենք, թէ հայ այր մարդոց եւ կիներու 85-90 առ հարիւրը բնիկ են Հարաւային կովկասի, Անատոլուի տափաստանի, հիւսիսային բարեբեր մահիկի, հիւսիսարեւմտեան Իրանի եւ Տարոսեան լեռնաշղթաներու ընդարձակ շրջանին: Ըստ իս, միայն հինգ տոկոսը կու գայ այն շրջաններէն, ուրկէ, պատմաբաններու եւ լեզուագէտներու մեծ մասին համաձայն, հնդեւրոպական լեզուները ծագում առած են: Ուստի երրորդ եզրակացութիւնը այն է, թէ մեր նախնիներուն մեծ մասը կը խօսէին կովկասեան կամ ներկայիս գոյութիւն չունեցող անատոլուական լեզուներով, մինչ հնդեւրոպական լեզուներ խօսող արմէնները փոքրամասնութիւն մըն էին, որոնք յաջողեցան իրարու միացնել բնիկներու շատ այլազան խումբեր՝ անոնց պարտադրելով իրենց լեզուն երկար դարերու վրայ: Լեզուի այդ փոխարինման ակադեմական ձեւին անունը «ընտրանիի գերիշխանութիւն»ն է: Չորրորդ, կը տեսնենք, որ այն ժամանակէն ի վեր, որ մենք սկսանք մենք մեզ իբրեւ հայ ճանչնալ, ուրիշ ժողովուրդներու կողմէ դէպի մեր շրջան ներխուժումները կամ գաղթերը ծինային առումով շատ փոքր ազդեցութիւն ձգած են մեր վրայ: Հետեւաբար այնպէս կը թուի, որ այսօր մենք մեր այլազանութեան մէջ համատեսակ մնացած ենք այնպէս, ինչպէս որ էինք երեք հազար հինգ հարիւր տարի առաջ: Հինգերորդ եւ վերջին եզրակացութիւնս կրնայ ցնցիչ ըլլալ ոմանց համար. մեր շրջանին մէջ բնակող ժողովուրդներէն շատերը ունին մեր նոյն ծինային այլազանութիւնը եւ կը պատկանին ծինային մեր նոյն հին խումբին: Անոնք մեզի չափ ամբողջական կերպով չեն ուսումնասիրուած, սակայն յստակօրէն կ'երեւի, թէ ունինք նոյն ծինային հին կազմուածքը: Ծինային առումով մեզի ամէնէն մօտիկ եղող ժողովուրդներն են ասորիները եւ քաղդէացիները: Յետոյ կու գան Իրաքէն, Իրանէն, քրտաբնակ շրջաններէ, Վրաստանէն եւ Ազրպէյճանէն եկող հրեաները: Թուրքերը եւ քիւրտերը եւս կը պատկանին նոյն հին խումբերուն՝ որոշ երանգաւորումով. քիւրտերը բաւարար չափով չեն ուսումնասիրուած տակաւին, իսկ թուրքերուն պարագային յայտնաբերուած է, որ անոնք անկասկած, սակայն յարաբերաբար փոքր (տասէն տասնհինգ տոկոս) կեդրոնասիական ծինային բաղկացուցիչ ունին, եւ առաւել եւս փոքր՝ Պալքանեան բաղկացուցիչ: Մինչ կարգ մը թուրքեր անկասկած ունին հայկական ծագում, անոնց մեծ մասը հաւանաբար սերած են հելլենացած անատոլուցիներէ, ինչպէս նաեւ կովկասցիներէ եւ հիւսիսային իրանցիներէ: Մինչ մեր շրջանին մէջ բնակող ժողովուրդը կրնայ մշակութային, կրօնական եւ լեզուական առումով տարբեր ըլլալ, անոնք կը թուին ունենալ հասարակաց բայց հին ծինային հիմք:

«ԱԶԴԱԿ».- Ի՞նչ են ձեր ապագայի ծրագիրները:

ՓԻԹԸՐ ՀՐԵՇՏԱԿԵԱՆ.- Մեր ըրածը աւելի լայնօրէն ծանուցել, որովհետեւ մենք հասած ենք մակարդակի մը եւ արդիւնքներէն բաւական վստահ ենք: Ես խօսեցայ հեռաւոր նախնիներու մասին, բայց հայերուն մեծամասնութեան համար ամէնէն հետաքրքրական բանը մօտիկ կամ հեռաւոր ազգականներ գտնելն է: Հիմա որ այդքան մեծ թիւով հայեր կը մասնակցին ծրագիրին, կը սկսինք գտնել շատ մը կապեր: Հայկական մականունները շատ շուտ փոփոխութեան ենթարկուած են, ինչ որ շատ լաւ ցուցանիշ մը չէ ազգաբանութեան համար: Եթէ կու գայիր որոշ քաղաքէ մը, մականունդ Այնթապլեան, Ուրֆալեան եւ Մարաշլեան կըլլար, նոյնիսկ եթէ իսկական մականունդ տարբեր էր: Յեղասպանութեան ատեն մենք կորսնցուցինք գրեթէ մեր ամբողջ ազգաբանական արձանագրութիւնները: Այդ կարելոր աղբիւրը ուրեմն պակասաւոր է, եթէ կը փնտռես քու նախնիներդ: Շատեր նաեւ որբացան Յեղասպանութեան ատեն: Անոնք չեն գիտեր՝ ո՛վ էին իրենց ծնողները: Մեր այս ծրագիրը այդ անձերուն պիտի օգնէ, որ գտնեն իրենց իսկական ընտանիքները եւ ծագումը: Երբ քննութիւնը կընես, կը սկսիս հաստատել մօտիկ եւ հեռաւոր կապեր: Ասիկա մեր ծրագիրին մէջ հայերուն մասնակցութիւնը քաջալերող գլխաւոր գործօններէն մէկն է:

Ժամանակը հասած է ծանուցելու մեր ծրագիրը: Կը յուսանք, որ անհատապէս հետաքրքրուողներուն թիւը բնականօրէն աճի, որպէսզի հասնինք այն հազար հոգիի թիրախին, որուն մասին խօսեցանք: Որովհետեւ որքան մեծ թիւով հայեր քննութիւնը ընեն, այդքան տեղեկութիւն կունենանք եւ այդքան ընտանեկան կապեր կը հայթայթենք, ինչպէս նաեւ հիմք մը կը հաստատենք ուրիշ ժողովուրդներու համար, երբ իրենք զիրենք մեզի բաղդատեն: Մեծագոյն արգելքը ծախսն է, որովհետեւ աժան չէ: Հայրական կողմի լաւ քննութեան մը նուազագոյն գինը հարիւր յիսուն ամերիկեան տոլար է, իսկ ամբողջական քննութիւնը հայրական եւ մայրական կողմի՝ հինգ հարիւր ամերիկեան տոլար: Դժբախտաբար շատերու համար ատիկա մեծ գումար մըն է: Ասիկա մարդոց չմասնակցելուն գլխաւոր պատճառներէն մէկն է, որովհետեւ անոնք ուրիշ առաջնահերթութիւններ ունին:

Հարցազրոյցը վարեց՝
ՎԱՀՐԱՄ ԷՄՄԻԵԱՆ

Անգլերէնէ թարգմանեց՝
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՔԻԻՍՊԷԿԵԱՆ

<http://www.aztagdaily.com/DisplayNews.php?ID=42000>